Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ներքին Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Թեմա՝ Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը 5-րդ դասարանի Մայրենիի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Գայանե Անտոնյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

1. Սովորողի արժեքային համակարգը----------4

2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները----------6

3. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրները-------7

4. Հետազոտական մաս----------8

5. Եզրակացություն----------12

6. Օգտագործված գրականության ցանկ----------13

7. Հավելված----------14

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու հոգևոր, գեղագիտական, բարոյական, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ կրթական, ժողովրդագրական, ազգային, ընտանեկան, մշակութային, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Մարդկության ձարգացման նոր միտումները հանգեցնում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների: Գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրները: Նպատակից ելնելով ձևակերպում ենք հետևյալ խնդիրները.

1) կատարել հիմնահարցի վերաբերյալ գրականության վերլուծություն,
2) բացահայտել 21-րդ դարի աշակերտի արժեքային համակարգը,

3) ուսումնասիրել աշակերտների արժեքների ձևավորման վրա ազդող գործոնները,
4) ուսումնասիրել աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները,
5) ուսումնասիրել հեքիաթների և առակների ազդեցությունը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

1. Սովորողի արժեքային համակարգը

Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունն ու օգտակարությունն է: Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մի առիթով Մահաթմա Գանդին ասել է. <<Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը >>:

Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են, հավատում են, քանի դեռ հավատում են, ապրում են: Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները:

Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ: Արժեհամակարգի ձևավորման և վերջինիս հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ կրթության կարևոր և անփոխարինելի մաս է կազմում արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում: Հասարակության զարգացման միտումներին, տնտեսական, քաղաքական հասարակարգերի փոփոխություններին զուգընթաց ՝ արժեքների հիմնախնդիրը բերվում է կոնկրետ հետազոտական դաշտ, ստեղծվում են ուսումնասիրություններ

իրականացնելու կիրառական հայեցակարգեր: Հետազոտողների մի լայն շրջանակ ուսումնասիրում է արժեքները՝ վերջիններս դիտարկելով մշակութային տարբեր խմբերում առկա արժեքային համակարգի տարբերությունները և նմանությունները: Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է աքսիոլոգիա (հունարեն՝ ἀξία - արժեք, հունարեն՝ λόγος - բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին): Աքսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում շատ անելիքներ ունի հայ դպրոցը, որի նպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Արժեքների մի մեծ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա , որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն , հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք , և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան: Այս համոզմունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները համամարդկային են, անօտարելի ու անբաժանելի և առանց տարբերակման տարածվում են բոլորի վրա:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների

համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Գրական հարուստ ժառանգության իմացությունն ու յուրացումը ամեն մի հայի, Հայաստանի հանրապետության ապագա քաղաքացու պարտականությունն է: Հայ գրականության դասավանդման հիմնական նպատակներից են՝ սովորողին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության մասին ,զարգացնել սովորողի ճանաչողական , սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները,ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի,սեփական պատմության , ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ ,դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները,ապահովել սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նրա մասնակցությունը: Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրն է՝ ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ՝ հանրության մեջ բնականոն գործելու համար:

2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները

Տարիքային տարբեր փուլերում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ: Այդ վերաբերմունքն ու հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանց, մամուլ) միջոցով: Կինոն,

թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա

ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական, այդպես էլ բացասական մոդելներ: Ընդ որում՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի նաև՝ միջամտություն:

3. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրները

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ

ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, 9 էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

4. Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքի գրության նպատակը աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորումն է դասավանդվող առարկայի՝ Մայրենիի շրջանակներում: Սովորողների մեջ դաստիարակել ազնիվ, բարի, ընկերասեր ու հայրենասեր մարդու, քաղաքացու կերպարը:Արժեքներ, որոնք պետք է կրի վաղվա մեր քաղաքացին՝ մանկավարժը, բժիշկը, զինվորը, Հայաստան երկրի ապագա տերը՝ գալիքի կերտողը:

Կրթական ցանկացած աստիճանում սովորողը պարտավոր է լինել բարեկիրթ և ստեղծարար՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ մասնագետ կդառնա վաղը:

Բարոյական դաստիարակությունը ձևավորում է անձնային որակներ, որոնք, անշուշտ, իրագործվում են առաջին հերթին գեղարվեստական գրականության միջոցով:

Ներկայացնում եմ իմ փորձարարական հետևյալ դասերը:

1) Համո Սահյանի <<Արագիլները>> բանաստեղծությունը:

Թեման շատ ուսուցողական, դաստիարակչական ուղղվածություն ունի: Գաղափարական հարցադրումները բազմակի են, որոնք սովորողի մոտ կձևավորեն մի շարք արժեքներ՝

1. Հավատարմություն. վաղ գարնանը <<որբացած բները>> նորից <<կդիմավորեն >> իրենց տերերին, արագիլները միշտ վերադառնում են՝ արցախցիները ևս մի օր վերադառնալու են իրենց լքված բնակավայրերը:

2. Ծնողասիրություն. արագիլներն այն եզակի թռչուններից են, որոնց ձագերը <<հոգ են տանում >> ծերացած ծնողներին.բացում են թևերը և հենակների ձև տալով՝ <<օգնում>> քայլել հիվանդ ծնողներին:
3. Ամուր ընտանիքի գաղափար. արագիլները ողջ կյանքի ընթացքում զույգ են կազմում միայն մեկի հետ, մեծացնում ձագերին, և հաջորդ գարնանը վերադառնում դարձյալ երկուսով:
4. Մարդասիրություն. արագիլները չեն վախենում մարդկանցից, իրենց բները հյուսում են շենքերի տանիքներին, քիվերին, ծառերին. համարվում են բարության, արևի, գարնան և բարեբախտության խորհրդանիշ:
5. Պանդխտություն. որբացած բներ բառակապակցությունը նաև պանդխտության խորհրդանիշն է, որը թեմատիկայով կապվում է միջնադարյան անտունիների հետ.դարեր շարունակ հայը ստիպված է եղել մի բնակավայրից տեղափոխվել կամ հեռանալ մեկ այլ բնակավայր, բայց հավատալով, որ մի օր վերադառնալու է և այդ լավատեսությամբ շարունակել արարել՝ արագիլները վերադարձին հավատում էին: (Հպչ՝ h1, h7, h9, h17)

2) Ավետիք Իսահակյանի <<Կյանքից թանկ բանը >> առակը

Թեման շատ արդիական է, ուսուցողական՝ դաստիարակչական շեշտադրմամբ: Գաղափարական հարցադրումները բազմակի են, որոնք նպատակադրված են ձևավորելու սովորողների արժեհամակարգը մի քանի ուղղվածությամբ:

1. Ազատություն. բարձրագույն արժեք, որին ձգտում է յուրաքանչյուր մարդ, օրորոցում կապկապված երեխան անգիտակցորեն ձգտում է <<ազատվել >> կապանքներից՝բարուրի փաթաթաններից:

Վիրավոր աղավնին չի ցանկանում տալ իր թևերը ջրերի ոգուն՝ պարիկին, քանի որ թևերը կյանքից թանկ են իր համար՝ երկնքի լազուրում թևածելու, կերակրվելու, ապրելու համար: Խորիմաստ պարիկը բաց է թողնում աղավնուն՝ ստրուկ աշխարհին կյանքից ամենաթանկ բանի՝ ազատության մասին հայտնելու:

2. Խաղաղություն.1-ին և 2-րդ արժեքները սերտ շաղկապակցված են, առանց խաղաղության չկա ապրելու իմաստ. քառասունչորսօրյա պատերազմի դժնդակ օրերին բոլորիս իղձերն ու երազանքները դարձան մեկը՝ խաղաղություն: Չէ, որ կանգ առավ կյանքի զարկերակը, ավելացան զինվորական պանթեոնները, որդեկորույս և անհետ կորած զինվորների մայրերը ամենուրեք փնտրեցին իրենց զավակներին, իսկ մենք յուրաքանչյուր Սերմնացանի հետ մահացանք, թաղվեցինք, շարունակեցինք ապրել միայն ֆիզիկապես.ապրել նրանց չապրելու գնով...
3. Հայրենասիրություն.իր հայրենի բնօրրանը սիրող, ծնողներին և ընտանիքը մեծարող, գյուղը, դպրոցը, իր ընկերոջը սիրող ու դաստիարակված աշակերտը կդառնա մեր երկրի վաղվա տերը: (Հպչ՝ h1, h7, h9, h17)

3)Հովհաննես Թումանյանի <<Խոսող ձուկը>> հեքիաթը:

Այս թեման ևս ունի դաստիարակչական խորը բովանդակություն սովորողի արժեքային համակարգի ձևավորման հարցում: Այն աշակերտի մեջ ձևավորում է բարի գործ կատարելու կարողունակություն: Հայ մարդը իր արժեհամակարգով էապես տարբերվում է մյուս ազգերից. հայկական մտածելակերպը, սովորույթները, ավանդույթները, հյուրասիրությունը, հայկական ավանդապաշտությունը:

Բարությունը, բարի գործ կատարելը հայ մարդու ձեռագիրն է, նրա էությունը՝ թույլին օգնելը, սատարելը: Շալակտարը խղճում է << խոսող >> ձկանը և բաց թողնում ջուրը՝ զրկվելով մի կտոր հաց վաստակելու հնարավորությունից, սակայն այդ լավությունը վերադառնում է իրեն և կնոջը՝ բարի հրեշի տեսքով՝ << լավություն արա ու թեկուզ ջուրը գցիր, չի կորչի >> (մեջբերում հեքիաթից):

Դասի միջոցով սովորողների մեջ ձևավորվում է ընկերասիրության, մարդասիրության այլ անձնային որակներ.թուրքը հայ ազգի դարավոր թշնամին է, վայրագ մի ցեղ, որն իր գոյության ողջ ընթացքում սպանել, թալանել, այրել ու գերեվարել է հային, բայց անգամ Արցախի շրջափակման պայմաններում հայ մարդը

դժբախտության պահին՝ Թուրքիայում վերջերս տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի ժամանակ, օգնության ձեռք մեկնեց իր թշնամուն՝ հղի կնոջը սպանողին, ծերերին քառատողին, Արարատն ու Վանա լիճը ստորաբար գողացողին, Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին մզկիթ վերաձևողին... օգնեց, որովհետև Հայ է, Մարդ է....

Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչն էլ աշակերտին կսովորեցնի պայքարող մարդ դառնալ, կսովորեցնի հաղթահարել կյանքի դժվարությունները. չէ որ բարու հաղթանակը չարի պարտությունն է, երազնքներին ու իղձերին հասնելու ձգտումը: (Հպչ՝ h1, h7, h9, h17)

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված փորձարարական դասավարումները հնարավորություն տվեցին հետադարձ հայացք գցել մինչ այժմ կատարված դասավարումներին և վերաարժեքավորել ուսուցման եռամիավոր նպատակներից դաստիարակչականը: Ուսուցման ժամանակակից մեթոդների ի հայտ գալուն և աշակերտակենտրոն ուսուցման մոդելին անցնելուն զուգահեռ, աստիճանաբար փոխվել է ուսուցչի դերը և գործառույթները: Ժամանակակից ուսուցչի աշխատանքն է աշակերտի աշխարհը լցնել բարձր բարոյական արժեքներով, հավատալ նրանց պոտենցիալին, տեսնել լավագույնը աշակերտների մեջ, մոտիվացնել: Ժամանակակից ուսուցչի հիմնական խնդիրն է սովորեցնել, թե ինչպես սովորել, սեր առաջացնել կրթության հանդեպ: Ժամանակակից ուսուցիչը գիտելիք վերարտադրող, դասավանդող սուբյեկտ լինելուց դարձել է ներգործող սուբյեկտ, որի դերը ուղղորդելն է: Հետևաբար ճիշտ արժեհամակարգ ձևավորելու պայմաններում աշակերտակենտրոն մոդելը կհաջողի իր գոյությունը:

Կատարված վերլուծությունների արդյունքում եզրահանգել եմ այն մտքին, որ աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորումը դպրոցի գերխնդիրն է: Այն իրականացվում է դպրոցում դասավանդվող ցանկացած առարկայի շրջանակներում, և հատկապես Գրականության դասաժամերին:

Գրականության (Մայրենիի) առարկայի բովանդակությունը թույլ է տալիս յուրաքանչյուր թեմայի վերջնարդյունքում ձևավորել բարեկիրթ, դաստիարակված, շրջահայաց քաղաքացիներ, մարդ ձևավորելն ու ճիշտ արժեհամակարգ կերտելը դարձնելով հիմնախնդիր: Մարդ, ով կլինի աջակցող, կարեկից, բարեգութ, ուրիշի ցավով տանջվող, խնդությամբ ու հաջողություններով ապրումակցող, ծնողասեր և ընկերասեր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված, ԵՊՀ, Իջևան 2019թ

2. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:
3. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80_%D5%A7%D5%BB

Հավելված 1

Դասի պլան 1

Առարկա- Մայրենի 5-րդ դասարան

Դասի թեման- Համո Սահյան «Արագիլները» բանաստեղծությունը

Ուսուցչի ազգանուն, անուն- Գայանե Անտոնյան

Դասի տեսլականը	**Դասի նպատակը**	**Կարևոր դրույթներր Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:**	**Անհրաժեշտ նյութերը Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար- դիդակտիկ պարագաներ:**
	1. Իմանալ Սահյանի մասին կենսագրական համառոտ տեղեկություններ 2. Իմանան «Արագիլները» բանաստեղծության բովանդակությունը *Վերջնարդյունք*-Կարողանան սեփական բառերով մեկնաբանել բանաստեղծության հիմնական գաղափարը Արտահայտեն սեփական կարծիքը բանաստեղծության գաղափարական արժեքի վերաբերյալ	Հիմնական հասկացություններ. որբացած բներ, անձմեռ հեռու, բուք արտաշնչող լեռնագագաթներ, տառապում էին, տագնապում, կարոտում, շտապում, հավատում էին	1.Սահյանի դիմանկարը 2 .Սահյանի ստեղծագործությունների ժողովածուները 3. «Արագիլները» երգի տեսաձայնագրությունը
	Գնահատում Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ,չափելի և իրատեսական:		
	Գործնական աշխատանքներ, գնահատում, ելքի քարտ, տնային աշխատանքի առաջադրանքներ:		
	Դասի սկիզբ Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա... Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

Դասի ընթացքը, մեթոդ ները			
	Հաշվառում, հարցերի միջոցով ամփոփել անցած դասը, բանալի բառերով ամփոփել տնային հանձնարարությունները, գրել մեկ-երկու նախադասություն՝ անցած դասի միտքն ամփոփող:	Գրել կարճ շարադրանք՝ օգտագործելով անցած դասի բանալի բառերը:	Հիմնական հասկացություններ. որբացած բներ, անձմեռ հեռու, բուք արտաշնչող լեռնագագաթներ, տառապում էին, տագնապում, կարոտում, շտապում, հավատում էին
	Նոր նյութի ներկայացում Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Նոր նյութի հաղորդում, 5 րոպեանոց կարճ դասախոսություն, խմբերի ձևավորում:	Մտագրոհի միջոցով կապ ստեղծել պատկերացումների և բանաստեղծության միջև՝ օգտագործելով «հավատալ» բառը:	Ունկնդրել «Արագիլները» երգը (Էլյլա Սարիբեկյանի կատարմամբ):
	Ուղղորդված աշխատանք Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին: Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույնաշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպվածսպասելիքներ:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Բաժանել նախօրոք պատրաստված քարտերը՝ որոշակի հանձնարարությամբ:	Բառարանի օգնությամբ բացատրել կարմիր տառերով գրված բառերը, Դուրս գրել ան-նախաձանցով գրված	Պատրաստված քարտեր, բառարան, դասագիրք

	բառերը, Բանաստեղծության յուրաքանչյուր տունը վերնագրել, դուրս գրել բարդ բառերը: Ուշադրություն դարձնել բանաստեղծության կառուցվածքին: Բանաստեղծության ո՞ր տողերն են պատմում արագիլների տրամադրության մասին:	

Ինքնուրույն աշխատանք Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:

Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
Պատրաստել ելքի քարտեր	Երեք բան, որ սովորեցի… Երկու բան, որ չեմ մոռանա… Մի բան, որ իմ մեջ փոխվեց…	Քարտեր

Դասի ավարտ

Ինչպես են աշակերտներըամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը:Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել ենհիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու:

Գործնական աշխատանքների ամփոփում, ելքի քարտերի գնահատում:

Տնային աշխատանք, եթե նախատեսվում է:

Բանաստեղծության բովանդակությունը վերաշարադրել սեփական բառերով:

Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո):

Որբացած բները «հավատում և սպասում էին» արագիլների վերադարձին: Աշակերտները, մենք բոլորս հավատում ենք, որ բոլոր արցախցիները, ովքեր հեռացել են հարկադրված, մի օր վերադառնալու են և տեր են կանգնելու Արցախի հողին ու ջրին:

Դասի պլան 2

Առարկա- Մայրենի 5-րդ դասարան

Դասի թեման- Ավետիք Իսահակյանի «Կյանքից թանկ բանը» առակը

Ուսուցչի ազգանուն, անուն- Գայանե Անտոնյան

Դասի տեսլականը	Դասի նպատակը	Կարևոր դրույթներր Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	Անհրաժեշտ նյութերը Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար- դիդակտիկ պարագաներ:
	1. Իմանան Իսահակյանի մասին կենսագրական համառոտ տեղեկություններ, 2. Իմանան առակի բովանդակությունը 3. Իմանան առակի բարոյախոսությունը, *Վերջնադրյունքը* -1. Կարողանան ներկայացնել Իսահակյանի կենսագրությունը, թվի նշանավոր ստեղծագործությունների վերնագրեր, երկրներ, որտեղ շրջագայել է, բացատրի Վարպետ պատվանունը, 2. Կարողանա սեփական բառերով մեկնաբանել առակի գաղափարական բովանդակությունը, բարոյախոսությունը, 3. Վիրավոր աղավնու կերպարով ներկայացնի այլաբանությունը, 4. Արտահայտի սեփական կարծիքը առակի գաղափարական արժեքի վերաբերյալ:	Հիմնական հասկացություններ. մեռնող աղավնի, պարիկը՝ ջրերի ոգին, կյանքից թանկ բան, աղավնու թևեր, ստրուկ աշխարհ, աղավնին՝ խաղաղության խորհրդանիշ:	Իսահակյանի դիմանկարը, նշանավոր ստեղծագործությունները, Quizizz.com (Առակս ի՞նչ կցուցանե խաղը՝ 10 հարց), Իսահակյանի մասին պատմող կարճ տեսանյութ
	Գնահատում Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ,չափելի և իրատեսական:		
	Գործնական աշխատանքներ, գնահատում, Quizizz.com՝Առակս ի՞նչ կցուցանե խաղը՝ 10 հարց, ելքի քարտ, տնային աշխատանքի առաջադրանքներ:		

Դասի ընթացքը, մեթոդները	**Դասի սկիզբ** Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա... Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Հաշվառում, հարցերի միջոցով ամփոփել անցած դասը, բանալի բառերով ամփոփել տնային հանձնարարությունները, գրել մեկ-երկու նախադասություն՝ անցած դասի միտքն ամփոփող:	Գրել կարճ շարադրանք՝ օգտագործելով անցած դասի բանալի բառերը:	Հիմնական հասկացություններ. մեռնող աղավնի, պարիկը՝ ջրերի ոգին, կյանքից թանկ բան, աղավնու թևեր, ստրուկ աշխարհ, աղավնին՝ խաղաղության խորհրդանիշ:
	Նոր նյութի ներկայացում Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	1. Մտագրոհի միջոցով կապ ստեղծել սովորողների պատկերացումների և առակի բովանդակության միջև օգտագործելով «ազատություն» բառը: 2. Պրիզմա մեթոդով վերլուծել առակի այլաբանությունը, կարդալ և մեկնաբանել առակի գաղափարը, 3. Quizizz.com-ի խաղի միջոցով նշել առակի հիմնական հարցադրումները	Հարցերի միջոցով նշել առակի հիմնական հարցադրումները : Պատասխանել խաղի (10) հարցերին և մեկ-երկու նախադասությամբ հիմնավորել նոր գիտելիքը	Դիտել Իսահակյանի մասին պատմող կենսագրական կարճ տեսանյութ :
	Ուղղորդված աշխատանք Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում է, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու		

	սխալներին: Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույն աշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպվածսպասելիքներ:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Բաժանել նախօրոք պատրաստված քարտերը՝ որոշակի հանձնարարությամբ:	Գտնել հոմանիշ բառեր, տեքստից գտնել հականիշների երեք զույգ, բացատրել թանկագին և կարոտագին բառերի կազմությունը, պատասխանը հիմնավորել այլ օրինակներով, բացատրել ազատություն և ստրուկ աշխարհ արտահայտությունների իմաստը	Պատրաստված քարտեր, բառարան, դասագիրք
	Ինքնուրույն աշխատանք Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Պատրաստել ելքի քարտեր	Ի՞նչ սովորեցի Ինչո՞ւ սովորեցի Ինչպե՞ս կկիրառեմ	Ելքի քարտեր, գնահատում
	Դասի ավարտ Ինչպես են աշակերտները ամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը: Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել ենհիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու:		
	Հարցերի միջոցով գործնական աշխատանքների ամփոփում, ելքի քարտի գնահատում		
	Տնային աշխատանք, եթե նախատեսվում է:		
	Գրել շարադրություն «Ամենաթանկ բանը իմ կյանքում» վերնագրով:		
	Վերլուծություն/անդրադարձ (լրացվում է դասից հետո):		
	Ազատությունը բարձրագույն արժեք է, որին ձգտում է յուրաքանչյուր ոք : Անգամ վայրի կենդանիներն ու թռչունները, կորցնելով իրենց ազատությունը, զրկվում են կյանքից... 120000 արցախցի մեր հայրենակիցներ զրկված են կենսական ամենակարևոր պայմաններից, իսկ աշխարհը լուռ է....		

Դասի պլան 3

Առարկա- Մայրենի 5-րդ դասարան

Դասի թեման- Հովհաննես Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթը

Ուսուցչի ազգանուն, անուն- Գայանե Անտոնյան

Դասի տեսլականը	Դասի նպատակը	Կարևոր դրույթներր Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	Անհրաժեշտ նյութերը Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ:
	1. Իմանան Թումանյանի մասին կենսագրական համառոտ տեղեկություններ, 2. Իմանան «Խոսող ձուկը» հեքիաթի բովանդակությունը, 3. Հասկանան հեքիաթի գաղափարական արժեքը, *Վերջնարդյունքը*- 1. Կարողանան ներկայացնել Թումանյանի կենսագրությունը, ստացած կրթությունը, նշանավոր ստեղծագործությունները, Ամենայն հայոց բանաստեղծ պատվանվան բացատրությունը, 2. Կարողանան սեփական բառերով պատմել և մեկնաբանել հեքիաթի գաղափարը, 3. Արտահայտեն սեփական կարծիքը հեքիաթի գաղափարական արժեքի վերաբերյալ :	Հիմնական հասկացություններ. շալակտար, անհոգի ձկնորս, խոսող ձուկ, ուռկան, մարդակերպ հրեշ, խեղճ կին, լավություն անել	Թումանյանի դիմանկարը, 1-ին, 2-րդ հատորները, «Խոսող ձուկը» հեքիաթի մուլտֆիլմը, Թումանյանի մասին պատմող վավերագրական ֆիլմը
	Գնահատում Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ,չափելի և իրատեսական:		
	Գործնական աշխատանքներ, գնահատում, ելքի քարտ, տնային աշխատանքի առաջադրանքներ:		

Դասի ընթացքը, մեթոդ ները	**Դասի սկիզբ** Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա... Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Հաշվառում, հարցերի միջոցով ամփոփել անցած դասը, բանալի բառերով ամփոփել տնային հանձնարարությունները, գրել մեկ-երկու նախադասություն՝ անցած դասի միտքն ամփոփող:	Գրել կարճ շարադրանք՝ օգտագործելով անցած դասի հիմնական հասկացությունները:	Հիմնական հասկացություններ. շալակտար, անհոգի ձկնորս, խոսող ձուկ, ուռկան, մարդակերպ հրեշ, խեղճ կին, լավություն անել
	Նոր նյութի ներկայացում Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	1. Մտագրոհի միջոցով կապ ստեղծել սովորողների պատկերացումների և հեքիաթի բովանդակության միջև՝ օգտագործելով «լավություն անել» բառակապակցությունը, 2. Կարդալ և մեկնաբանել հեքիաթի գաղափարը,	Հարցերի միջոցով նշել հեքիաթի հիմնական գաղափարը, «լավություն» և «բարեսրտություն» բառերով կազմել նախադասություններ	Դիտել Թումանյանի մասին պատմող վավերագրական կարճ ֆիլմը
	Ուղղորդված աշխատանք Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին: Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույն աշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպվածսպասելիքներ:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը

	Բաժանել նախօրոք պատրաստված քարտերը՝ որոշակի հանձնարարությամբ:	Բառարանի օգնությամբ բացատրել կարմրով գրված բառերը Ցանց, բեռնակիր, ձկնորս բառերը արտահայտել բառակապակցությամբ Գլուխ և լեզու բառերով կազմել 4-ական բառակապակցություն-ներ Հեքիաթը բաժանել մասերի և մասերից մեկի բովանդակության համար գրել ավարտ	Պատրաստված քարտեր, բառարան, դասագիրք
	Ինքնուրույն աշխատանք Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Պատրաստել ելքի քարտեր լուսացույցի մեթոդով	Գրել ի՞նչը լավ սովորեցի (կանաչ) Ի՞նչը լավ չհասկացա (դեղին) Ի՞նչը չհասկացա (կարմիր)	Ելքի քարտ, գնահատում
	Դասի ավարտ Ինչպես են աշակերտներըամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը:Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել ենհիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու:		
	Հարցերի միջոցով գործնական աշխատանքների ամփոփում, ելքի քարտի գնահատում		
	Տնային աշխատանք, եթե նախատեսվում է:		
	Գրել շարադրանք «Եթե ես լինեի ձկնորսի փոխարեն» վերնագրով		
	Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո):		
	Կյանքի ցանկացած իրավիճակում մարդը պետք է լինի օգնող, աջակցող, կատարի բարի գործեր, բոլոր հեքիաթները վերջանում են բարու հաղթանակով և չարի պարտությամբ : Միայն բարությունը կփրկի աշխարհը....		